ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հունվարի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

3
(3212)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԱՐԱՐԸ ԱՐԺԵՔՆԵՐԻՑ Է ԽՈՍՈՒՄ

Արձագանքելով ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հռիփսիմե Հունանյանի հրաժարականին՝ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հայտարարել է, որ Հունանյանի քայլը «խոսում է նրա մարդկային բարձր արժեքների մասին»:

«Քաղաքականությունը շատ պատասխանատու գործունեություն է, լինում են վրիպումներ, բայց ամենակարեւորը՝ ունենալ քաջություն դրանց անդրադառնալու եւ ճիշտ արձագանքելու»,- ճեպազրույցի ընթացքում նշել է նախարարը՝ հավելելով, որ Հունանյանի հրաժարականը գնահատանքի արժանի քայլ է:

Սակայն այս հայտարարությունը հանրային դաշտում հակասական արձագանք է առաջացրել՝ հաշվի առնելով առողջապահական համակարգում նախկինում տեղի ունեցած ծանր միջադեպերը: Մասնավորապես, 2020-ի 44-օրյա պատերազմում զոհված մեր հայորդիների դիակները, Աբովյանի դիահերձարանում անմարդկային պայմաններում, պարկերի մեջ լցված, հայտնվել էին գետնին թափված վիճակում: Դիակների նկատմամբ այս անընդունելի վարքը լայն հանրային վրդովմունք էր առաջացրել: Բայց այդ սկանդալից հետո առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը քաղաքական պատասխանատվություն չկրեց, հրաժարական չներկայացրեց եւ սահմանափակվեց միայն ներողություն խնդրելով՝ չընդունելով համակարգային սխալի համար անձնական պատասխանատվությունը:

Երկակի չափանիշների նման դրսեւորումը նախարարի կողմից, մեղմ ասած, ազնիվ չէ:

Armlur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ երեկ երեկոյան ՔՊ վարչությունը ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հռիփսիմե Հունանյանին «կանչել» է նիստի: ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ Հունանյանից նախ պահանջել են բացատրել, թե ինչու է անդադար այնպիսի ելույթներ ունենում, ինչը վարկաբեկում է ՔՊ-ն ու ազդում կուսակցության վարկանիշի վրա: Վարչության անդամները անդադար հարցեր են տվել նրան, ճնշել, մեջբերել նրա հայտարարություններից, ինչի պատճառով Հունանյանը հայտնվել է շատ տհաճ իրավիճակում: ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ նա այս պահին էլ հոգեպես շատ ծանր վիճակում է գտնվում: Նիկոլ Փաշինյանի խոսքից Հունանյանը հասկացել է, որ պետք է հրաժարական տա, ավելին, ինքնաբացարկ ներկայացնի 2026 թվականի նախընտրական ցուցակում առաջադրվելու համար: Հիշեցնենք, որ երեկ առավոտյան Հռիփսիմե Հունանյանը ֆեյսբուքյան իր էջում գրել էր. «Վերջին շրջանում Ազգային Ժողովում հնչեցրած իմ որոշ մտքեր քննադատության արժանացան մեր մի շարք քաղաքացիների կողմից: Նախ, թույլ տվեք ներողություն խնդրել իմ այն ձեւակերպումների համար, որոնք այս կամ այն կերպ առաջացրել են մեր սիրելի քաղաքացիների զայրույթն ու դժգոհությունը»: Ու հայտնել է, որ հրաժարվում է ԱԺ առողջապահության հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

⇨ էջ 2

Հունվարի 20-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ծովազարդ գյուղի վարչական տարածքում՝ Սեւանա լճի ափին գտնվող կիսակառույց շինության բակում, մահացած քաղաքացի էր հայտնաբերվել եւ 1 վիրավոր: Ոստիկաններն ու պարեկները պարզել էին, որ մահացածը Երեւանի բնակիչ 61-ամյա Արտուշ Գ.-ն է, իսկ վիրավորը՝ Կոտայքի մարզի բնակիչ 35-ամյա Մամիկոն Ա.-ն: Shamshyan.com-ի տեղեկություններով, այդ կիսակառույց շենքում կատարվում էին վերանորոգման աշխատանքներ, եւ նշված անձինք վերամբարձ կռունկի միջոցով պետք է գործողություններ կատարեին՝ տեղադրելով ապակիներ, սակայն մոտ 12 մետր բարձրության վրա աշխատանքներ կատարելու ժամանակ ճոպանը (տրոսը) կտրվել է, եւ նրանք վայր են ընկել: ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Ծովազարդ գյուղի վարչական տարածքը՝ Սեւանա լճի ափին գտնվող կիսակառույց շինությունը, որտեղից հունվարի 20-ին 2 քաղաքացի վայր են ընկել, եւ նրանցից մեկը մահացել է, պատկանում է իշխանությունների «սրտի» գործարար Նարեկ Նալբանդյանին:

⇨ էջ 4

Բնակչության մոտ ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերումն ու առգրավումը շարունակում է մնալ ոստիկանության կարեւոր խնդիրներից: Բնակչության շրջանում ակտիվ բացատրական աշխատանք են իրականացնում Ոստիկանության բոլոր ծառայությունները՝ Քրեական ոստիկանության տարածքային վարչությունների եւ Համայնքային ոստիկանության բաժինների ծառայողները, Պարեկային ծառայության եւ արդեն նաեւ Ոստիկանության գվարդիայի ծառայողներ: Ոստիկանությունը ամփոփ ներկայացրել է վերջին շրջանում ոստիկանության բացատրական աշխատանքի արդյունքները: Համայնքային ոստիկանության Հրազդանի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում կամավոր հանձնել են ողորկափող որսորդական հրացան: Համայնքային ոստիկանության Անիի բաժնում կամավոր հանձնել են հրազեն, գազային ատրճանակ, երեք նռնակ, ինքնաձիգի փամփշտատուփ եւ ավելի քան 150 փամփուշտ:

Շարունակությունը՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում

ԶՐՈՒՅՑ

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Իշխանությունները Հայ Առաքելական Եկեղեցու դեմ արշավը դեռ շարունակում են, սակայն իրենց ցանկալի արդյունքին հասնելուց դեռ շատ հեռու են:

Բանն այն է, որ ամիսներ ընթացող պայքարի արդյունքում այդպես էլ չի հաջողվում Վեհարանն ազատել Վեհափառից, իսկ Վեհափառ հայրապետն աներեր է այս հարցում:

ArmLur.am-ը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի հետ զրուցել է իշխանության կողմից եկեղեցու դեմ մղվող արշավի մասին, որն անվանվում է «եկեղեցու բարենորոգում»:

-Պարոն Հակոբյան, Դուք Նիկոլ Փաշինյանի հետ մասնակցում եք պատարագներին, ենթադրում ենք, որ միացել եք վարչապետի թեզերին, որ պետք է վեհափառին հեռացնեք:

-Ես հենց սկզբից միացել եմ, երբ առաջին անգամ այդ թեզերի մասին հրապարակայնորեն խոսվել է, ես ակունքներում եմ եղել:

-Այդ ի՞նչ էր արել Առաքելական եկեղեցին, որ պետք է բարենորոգվեր: Ինչո՞ւ եք դեմ դուրս եկել Վեհափառին:

-Շատ լավ հարց էր: Ասեմ՝ ինչ էր արել. նախ, երբ մենք խոսում ենք եկեղեցու մասին, ես ուզում եմ խոսենք անձերի մասին, ոչ թե եկեղեցու, որովհետեւ հոգեւորականը դա չի նշանակում ամբողջ եկեղեցին: Եվ Կտրիճ Ներսիսյանը չի նշանակում Հայ առաքելական եկեղեցի: Ինչո՞ւ չի նշանակում: Շատ պարզ, որովհետեւ նա խախտել է կուսակրոնության ուխտը: Նա խախտել է Եկեղեցու կանոնագիրքը ամբողջությամբ: Ինչքան բան կար խախտելու, իմ կարծիքով նա խախտել է: Ինձ համար նաեւ անսպասելին այն էր, որ ինքը չի ծառայում եկեղեցուն, չի ծառայում պետական պահպանությանը եւ, հետեւաբար, չի ծառայում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին: Սա է պատճառը, որ մենք ընտրել ենք հանրությանը եւ Հայ առաքելական եկեղեցու հետեւորդներին առաջարկելու Եկեղեցին բարենորոգելու օրակարգ:

-ՔՊ կուսակցությունը՝ Ձեր թիմը, բարենորոգում է եկեղեցին՝ ասելով, որ Վեհափառը խախտել է կուսակրոնության ուխտը, բայց բարենորոգում է, օրինակ, այնպիսի քահանաների եւ եպիսկոպոսների հետ, ովքեր հայտնի են օֆշորներում բիզնեսներ ունենալով: Օրինակ՝ Կճոյանո՞վ պետք է բարենորոգվի Եկեղեցին:

-Ցավոք սրտի, Կտրիճ Ներսիսյանը ունեցել է քաղաքական այլ արտաքին օրակարգ, իսկ պետությունն ու ժողովուրդը ունեցել են այլ արտաքին քաղաքական օրակարգ: Արդյո՞ք պետք է նա շարունակի լինել Վեհափառ, թե ոչ: Դուք Կճոյանի անունը տվեցիք: Ես հեռու եմ այն մտքից, որ մարդը կարող է այնպես ապրել, որ ոչ մի մեղք չգործի կամ ամբողջությամբ անբասիր վարք ունենա: Ես իհարկե չգիտեմ՝ ինչու եք միայն Կճոյանի անունը տալիս, բայց ես ուզում եմ նշել, որ այս պրոցեսին ի սկզբանե միացած են եղել թվով 10 եպիսկոպոսներ:

-Նրանց թիվը չի ավելացել, պարոն Հակոբյան:

-Եկեք թվային բնորոշում չտանք այդ ամենին: Սա գործընթաց է, որը կապ չունի մարդկանց քանակի հետ: Սա գործընթաց է, որը կոչվում է «Եկեղեցու բարենորոգում»: Ես կարծում եմ՝ Եկեղեցին կարիք ունի բարենորոգվելու եւ հավատացած եմ եղել դրանում տարիներով:

-Միայն Վեհափառի հեռացումով Եկեղեցին կբարենորոգվի՞:

-Ո՛չ: Ես կարծում եմ՝ բազմաթիվ օրենքներ կան Եկեղեցում հարյուրամյակներով գործող, որոնք ներկայիս պայմաններում պիտի փոքր-ինչ վերանայվեն:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԼԱՈՒԴԻԱ ԲՈՒՇԻՆ

Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն ընդունել է Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կլաուդիա Բուշին: Հանդիպմանը մասնակցել են նաեւ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի տնօրեն Մադլեն Ռաուշենբերգերը եւ Գերմանական զարգացման բանկի (KfW) հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Ջառա Չատինյանը:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ կառավարության տարածած հաղորդագրությունից, ողջունելով հյուրերին՝ փոխվարչապետը բարձր է գնահատել երկկողմ համագործակցության ներկայիս դինամիկան՝ հատուկ ընդգծելով Հայաստան-Գերմանիա գործընկերության ռազմավարական օրակարգով սահմանված առաջնահերթ ուղղություններով համագործակցության շարունակական խորացման կարեւորությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը մանրամասն անդրադարձել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում իրականացվող զարգացման ծրագրերի ընթացքին, այդ թվում՝ ջրային ռեսուրսների կառավարման, ոռոգման համակարգերի արդիականացման, ինչպես նաեւ էներգետիկ փոխկապակցվածության բարելավման ուղղություններով:

ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հռիփսիմե Հունանյանը հրաժարական է ներկայացրել Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

Միեւնույն ժամանակ, Հռիփսիմե Հունանյանը որոշել է ինքնաբացարկ հայտնել առաջիկա խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվելուց:

Հունանյանն այդ մասին գրել է «Ֆեյսբուք»-ի իր էջում:

«Վերջին շրջանում Ազգային Ժողովում հնչեցրած իմ որոշ մտքեր քննադատության արժանացան մեր մի շարք քաղաքացիների կողմից:

Նախ, թույլ տվեք ներողություն խնդրել իմ այն ձեւակերպումների համար, որոնք այս կամ այն կերպ առաջացրել են մեր սիրելի քաղաքացիների զայրույթն ու դժգոհությունը:

Անշուշտ, հրապարակային խոսքը քաղաքական գործունեության անբաժան մասն է, եւ երբեմն անհնար է խուսափել բանավոր խոսքի ժամանակ տեղ գտած վրիպումներից:

Սխալվել կարող են բոլորը, իսկ առերեսվել սխալների հետ եւ ուղղել դրանք՝ պարտավոր են անել առաջին հերթին հանրային առաջնորդություն ստանձնած մարդիկ՝ օրինակ ծառայելով բոլորի համար:

Լավագույն առաջնորդությունը սեփական օրինակով առաջնորդությունն է: Կարծում եմ, սա մի բան է, որ պետք է լինի մեր քաղաքական դաշտի արժեքային ուղենիշներից մեկը:

Առաջնորդվելով այս ուղենիշով՝ որոշել եմ հրաժարականի դիմում ներկայացնել ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

Միաժամանակ, որոշել եմ ինքնաբացարկ հայտնել առաջիկա խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվելուց:

Շարունակելու եմ ծառայել մեր պետությանն ու ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետության հզորացման կարեւորագույն առաքելության ճանապարհին»,- գրել է նա:

Հռիփսիմե Հունանյանն ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվել էր 2025 թվականի հոկտեմբերից:

ԱՄՀ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է

«Դադարեցնում եմ լիազորություններս ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալի պաշտոնում»,-այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է Դավիթ Խաչատրյանը:

«Շնորհակալ եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ վստահության, քաղաքական աջակցության եւ բարեփոխումների օրակարգը առաջ տանելու հետեւողականության համար:

Շնորհակալ եմ հարգարժան փոխվարչապետներ Մհեր Գրիգորյանին եւ Տիգրան Խաչատրյանին՝ ոլորտային պրոֆեսիոնալ համակարգման, գործընկերային ու մարդկային վերաբերմունքի համար:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում ԱՄՆ-ում ՀՀ դեսպան, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Նարեկ Մկրտչյանին, ում ոլորտային առաջնորդությամբ աշխատել ենք թիմային փոխվստահության մթնոլորտում եւ ում հետ միասին հաղթահարել ենք հետճգնաժամային իրավիճակները, հեղինակել եւ ներդրել ենք համակարգային նշանակության մի շարք նախագծեր՝

- կենսաթոշակների հետվճարի ծրագիրը,
- սահմանամերձ գյուղերում բնակարանաշինության ծրագիրը,
- Ղարաբաղից տեղահանված ընտանիքների բնակարանային աջակցության 2 ծրագրերը, որոնց շնորհիվ տեղահանված շուրջ 5500 ընտանիք ունեցան իրենց տունը,
- ժողովրդագրության ռազմավարությունը եւ դրանից բխող մի շարք ծրագրեր,
- անհուսալի վարկեր ունեցող անձանց աջակցության ծրագիրը,
- կենսաթոշակների եւ նպաստների անկանխիկի սահուն անցման բարեփոխումները,
- անաշխատունակության եւ մայրության նպաստների ռեֆորմը, որով թվայնացվեցին բոլոր գործընթացները,
- կենսաթոշակային ռեֆորմի նախագիծը,
- սոցիալական պաշտպանության ոլորտի թվային տասնյակ համակարգերի գործարկումը՝ շնորհիվ «Նորք» տեխնոլոգիական կենտրոնի պրոֆեսիոնալ թիմի:

Հպարտ եմ այն թիմով, որի հետ աշխատել եմ: Մասնագիտական, նվիրված եւ արժանապատիվ մարդիկ, ովքեր ամեն օր փորձել են պետական համակարգում թողնել իրական արժեք:

Պետական ծառայությունը ինձ համար եղել է առաքելություն: Եվ այս փուլը համարում եմ հերթական անցում դեպի նոր ձեւաչափերով օգտակար լինելու հնարավորություն:

Շնորհակալ եմ նախարարության բոլոր գործընկերներիս, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության, Կենտրոնական բանկի, ինչպես նաեւ միջազգային եւ մասնավոր կառույցների գործընկերներին՝ պետության ուժեղացման գործում արդյունավետ համագործակցության համար, եւ սիրելի քաղաքացիներին՝ վստահության, աջակցության եւ համբերության համար»,- ասվում է գրառման մեջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԵԾ ՆԵՐՈՒԺ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն ընդունել է Մեքսիկայի Պատգամավորների պալատի Մեքսիկա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Սիլվիա Պատրիսիա Խիմենես Դելգադոյի գլխավորած պատվիրակությանը:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարածած հաղորդագրությունից, հանդիպման ընթացքում Գեւորգ Պապոյանը կարեւորել է խորհրդարանական բարեկամական խմբերի աշխատանքը՝ որպես գործարար կապերի ամրապնդման եւ առեւտրատնտեսական հարաբերությունների խորացման արդյունավետ հարթակ:

Նախարարը նշել է, որ Հայաստանը հետեւողականորեն առաջ է գնում տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման եւ սահմանների բացման ուղով, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում միջազգային տնտեսական համագործակցության եւ ներդրումների համար:

«Հայաստանն ու Մեքսիկան ունեն համագործակցության մեծ ներուժ, որն այս պահին ամբողջությամբ իրացված չէ: Վստահ եմ, որ համատեղ եւ նպատակային աշխատանքի շնորհիվ կարող ենք էականորեն ակտիվացնել տնտեսական կապերը եւ կյանքի կոչել նոր փոխշահավետ նախաձեռնություններ»,- նշել է նախարար Գեւորգ Պապոյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մեքսիկական ներդրումների ներգրավման հնարավորությունները, ինչպես նաեւ համագործակցության հեռանկարները ագրոարդյունաբերության, գյուղատնտեսության եւ զբոսաշրջության ոլորտներում:

Կողմերը կարեւորել են տնտեսական երկխոսության ակտիվացումը եւ պատրաստակամություն հայտնել շարունակել փոխգործակցությունը քննարկված հարցերի շուրջ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՊԱՐՏՔԵՐԻՑ

ՌԴ ֆինանսների նախարարությունը չի կարծում, որ երկիրը «ցարական պարտքերի» վճարման պարտավորություններ ունի: Այս մասին Պետդումայի նիստի ժամանակ հայտարարել է ՌԴ ֆինանսների փոխնախարար Վլադիմիր Կոլիչեւը, փոխանցում է TASS-ը:

«Խորհրդային Միությունը չէր կարծում, որ պետք է վճարել, իսկ Ռուսաստանի Դաշնությունը՝ առավել եւս»,- ասել է նա՝ վերահաստատելով, որ Ֆինանսների նախարարությունը չի կարծում, թե Ռուսաստանը պետք է վճարի «ցարական պարտքերը»:

«Որքան հասկանում եմ, դա դատական գործընթաց է: Մեզ մոտ՝ Ռուսաստանում, Գլխավոր դատախազությունն է ներկայացնում պատասխանող կողմին բոլոր արտաքին հայցերով: Անկեղծ ասած, մանրամասներին պարզապես չեմ տիրապետում, բայց եթե այնտեղ դատական գործընթաց սկսվի, ապա Ռուսաստանը, իհարկե, կմասնակցի դրան», - արձանագրել է փոխնախարարը:

Ամերիկյան հիմնադրամը Ռուսաստանից պահանջել է 225 միլիարդ դոլար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՂՐ

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԾԱՂՐՈՒՄ Է

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը եւ փոխնախարար Լենա Նանուշյանը կարծես թե ավարտել են Առողջապահության ապահովագրության ներդրման գործընթացը, հիմա էլ լծվել են ստատուս ու մեկնաբանություն գրելու գործին:

Անահիտ Ավանեսյանը, նախարար լինելով հանդերձ, որ պետք է զբաղվի առողջապահական ոլորտի քաոսային վիճակով, թիրախավորում եւ ծաղրում է ընդդիմադիր «Մեր ձեւով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանին:

Բանն այն է, որ Կարապետյանն ասել էր՝ «պետք է ունենանք առաջնորդ, որ գնա ուրիշ երկրից «որս» բերի, երկիրը պահի», «որս»՝ նկատի ունենալով ռեսուրս: Սրան անդրադառնալով էլ՝ Ավանեսյանն իր անձնական էջում կիսվել է եւ մեկնաբանություն թողել. «Էն Քոչարյանի խփած առյուծը ի նկատի ունի՞»:

Որ նախարարը առողջապահության ոլորտից շատ բան չի հասկանում, պարզ է, սակայն թիմին հաճոյանալու համար քաղաքական քարոզն ու թիրախավորումը կարծես թե առաջնային է համարում:

Սրան ի պատասխան՝ փոխնախարար Նանուշյանը եւս հայտնել է իր հեղինակավոր կարծիքը: «Բա քարանձավների բանալիները ե՞րբ են բաժանելու»,-գրել է Նանուշյանը, որը չկարողացավ գլուխ բերել Առողջապահության համընդհանուր ապահովագրության ծրագիրը, եւ Ավանեսյանն իր ձեռքը վերցրեց այն՝ Նիկոլ Փաշինյանի առաջ գլխիկոր չմնալու համար:

Ֆեյսբուքյան օգտատերերից մեկն էլ փորձել է նախարարին եւ փոխնախարարին թմբիրից հանել եւ մեկնաբանություն է թողել. «Դուք ձեր գործով զբաղվեք, թե չէ առանց դեղ մնացինք»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐԵԼ

Հայաստանն Ադրբեջանից թույլտվություն է խնդրել իր բեռները Ռուսաստան տարանցելու համար: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հունվարի 19-23-ը Շվեյցարիայի Դավոս քաղաքում անցկացվող տնտեսական ամենամյա ֆորումի ժամանակ:

Նա նշել է, որ այսօր փոխադրումն իրականացվում է Վրաստանի տարածքով, բայց կգա մի օր, երբ Ադրբեջանից Հայաստան ու Հայաստանից Ադրբեջան ուղիղ ճանապարհով կիրականացվի այն: «Այդ օրը շատ հեռու չէ»,- ասել է Ալիեւը:

Ֆորումի ժամանակ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանն էլ իր հերթին նշել է, որ տարիներ անց այն սովորական գործընթաց է լինելու, երբ Հայաստանից կամ Ադրբեջանից քաղաքացիները կարողանան սահմանը հատել, առեւտուր անել:

«Մենք արթնանում էինք, մինչ այս համաձայնագրերի ստորագրումը, հետաքրքրվում էինք, թե սահմանին ինչ է կատարվել: Իսկ այնտեղ հիմնականում կրակոցներ, զոհեր, վիրավորներ էին, որը մեզ ուղղակի սթրեսային վիճակի մեջ էր պահում: Հիմա մենք նույնիսկ մոռացել ենք, ապրում ենք ավելի շատ մեր ծրագրերի իրականացման գործով»,- ասել է ՀՀ նախագահը:

Նշենք, որ ավելի վաղ Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանը հայտնել էր, որ Դավոսի տնտեսական հանձնաժողովին չի մասնակցի Նիկոլ Փաշինյանը:

Ֆորումին չի մասնակցում նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Կաբախիձեն, քանի որ, ինչպես հայտնել էր երկրի Կառավարությունը, արդեն երկրորդ տարին անընդմեջ ֆորումի կազմակերպիչներից Կոբախիձեն հրավեր չի ստանում:

Տեղեկացնենք, որ Դավոսի ամենամյա ֆորումին հրավիրվում են բիզնեսի առաջատար ներկայացուցիչներ, քաղաքական առաջնորդներ, նշանավոր մտավորականներ: Ֆորումի քննարկման հիմնական թեմաները համաշխարհային ամենահրատապ խնդիրներն են, այդ թվում՝ առողջապահական եւ շրջակա միջավայրի:

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հունվարի 20-ին նոր որոշումներ են ընդունվել:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից ազատվել է Հոգեշնորհ Տեր Գուսան ծայրագույն վարդապետ Ալճանյանը: Թեմի առաջնորդի պաշտոնում նշանակվել է Գերաշնորհ Տեր Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանը՝ ազատվելով Գեղարքունյաց թեմի առաջնորդի պաշտոնից:

Այս մասին հայտարարել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգը՝ հայտնելով, որ մեկ այլ տնօրինությամբ՝ քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսուչ Հոգեշնորհ Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանը համատեղության կարգով նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

Հիշեցնենք, որ հունվարի 6-ին հայտնի դարձավ, որ Տեր Գուսան ծայրագույն վարդապետ Ալճանյանը միացել է Վեհափառ Հայրապետի դեմ դուրս եկած 10 բարձրաստիճան հոգեւորականներին՝ ողջունելով Վեհափառի դեմ սկսած պայքարը:

Նշենք նաեւ այն, որ, ինչպես Շվեյցարահայ գործարար ու բարերար Վահե Գաբրաշն է հայտնել, Շվեյցարիայի հայ համայնքը հավատարիմ է Հայ Առաքելական Եկեղեցուն եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

ՔԱՂԱՔԱՑԻ Է ՄԱՀԱՑԵԼ. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔ

ArmLur.am–ի տեղեկությունների համաձայն՝ Ծովազարդ գյուղի վարչական տարածքը՝ Սեւանա լճի ափին գտնվող կիսակառույց շինությունը, որտեղից հունվարի 20-ին 2 քաղաքացի վայր են ընկել, եւ նրանցից մեկը մահացել է, դատկանում է իշխանությունների «ուրտի» գործարար Նարեկ Նալբանդյանին:

Արդյո՞ք շինհրապարակում պահպանվել են անվտանգության կանոնները եւ առհասարակ, դեպքով կա՞մ քրեական վարույթ, թե՞ ոչ: Ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին. «Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածի 2-րդ մասով՝ շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ»:

Ձերբակալված անձ չկա:

Հունվարի 20-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ծովազարդ գյուղի վարչական տարածքում՝ Սեւանա լճի ափին գտնվող կիսակառույց շինության բակում, մահացած քաղաքացի էր հայտնաբերվել եւ 1 վիրավոր: Ոստիկաններն ու պարեկները պարզել էին, որ մահացածը Երեւանի բնակիչ 61-ամյա Արտուշ Գ.-ն է, իսկ վիրավորը՝ Կոտայքի մարզի բնակիչ 35-ամյա Մամիկոն Ա.-ն:

Shamshyan.com-ի տեղեկություններով, նշված կիսակառույց շենքում կատարվում էին վերանորոգման աշխատանքներ, եւ նշված անձինք վերամբարձ կռունկի միջոցով պետք է գործողություններ կատարեին՝տեղադրելով ապակիներ, սակայն մոտ 12 մետր բարձրության վրա աշխատանքներ կատարելու ժամանակ ճոպանը (տրոսը) կտրվել է, եւ նրանք վայր են ընկել:

Shamshyan.com-ի տվյալներով, նշված շինությունը պատկանում է Հայաստանում հայտնի գործարարներից մեկին:

Ի դեպ, «Հետք»-ը հրապարակել էր, որ իշխանափոխությունից հետո հայտնի դարձած գործարար Նարեկ Նալբանդյանը շուկայականից բազմապատիկ էժան գնով տիրացել է գործարար Փայլակ Հայրապետյանի գույքին: Կասկածելի գործարքներով խնդրահարույց գույքը ձեռք բերած գործարար Նարեկ Նալբանդյանը դարձել է քրեական գործով անցնող եւս մեկ խոշոր գույքի սեփականատեր:

«Հետքը» պարզել է, որ Նարեկ Նալբանդյանը ձեռք է բերել Սեւանի «Հայրապետ» հյուրանոցային համալիրն ու հարեւանությամբ գտնվող երկու այլ գույք: 2021 թ.-ին տեղի ունեցած գործարքի մանրամասներից հայտնի է դառնում, որ 6 միլիոն դոլար գնահատված հյուրանոցը գործարարը ձեռք է բերել 18 անգամ ցածր գնով՝ 360 հազար դոլարով: Այս ամենը տեղի է ունեցել քրեական գործի առկայության պայմաններում:

Նարեկ Նալբանդյանը հանրությանը հայտնի դարձավ, երբ արտոնյալ պայմաններով ձեռք բերեց նախկին պաշտոնյայից պետությանը վերադարձված Ծաղկաձորի «Գոլդեն Փելիս» հյուրանոցը, իսկ գործարարի կինը գնեց վարչապետ Հովիկ Աբրահամյանի՝ քրեական գործով անցնող Մոնումենտի առանձնատունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Կոտայքի մարզի պարեկները հունվարի 19-ին՝ ժամը 23:35-ին, Հրազդան քաղաքի Հայ Ֆիդայիների փողոցում հայտնաբերել, ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Հրազդանի բաժին են տեղափոխել Սեւան քաղաքի բնակիչ 23-ամյա մի երիտասարդի, որը 2025թ. հուլիսի 28-ից հետախուզվում էր ՌԴ Մագադան քաղաքի ոստիկանության կողմից. խափանման միջոցը՝ կալանք: Հայտնաբերման մասին տեղեկացվել է հետախուզումը նախաձեռնողին:

***

Քրեական ոստիկանության գլխավոր եւ Արագածոտնի մարզային վարչությունների ու Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Աշտարակ քաղաքի Լինչի փողոցի հասցեներից մեկում հայտնաբերվել եւ Էրեբունու բաժին է տեղափոխել 47-ամյա մի կին: Նա 2016թ. հոկտեմբերի 26-ից ՌԴ Մոսկվայի մարզի իրավապահների կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին:

***

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի ծառայողների համատեղ օպերատիվ-ուղեկցող խմբի կողմից հունվարի 20-ին Ֆրանկֆուրտ-Երեւան չվերթի ինքնաթիռով Հայաստան է տեղափոխվել օտարերկրյա քաղաքացի 28-ամյա մի երիտասարդ: Նա 2024թ. դեկտեմբերի 17-ից Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կողմից հետախուզվում էր հանցավոր կազմակերպությանը մասնակցելու եւ համակարգչային հափշտակության մեղադրանքներով. խափանման միջոցը՝ կալանք:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչները «Էվրիկա Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող հացի արտադրամասում (ք. Երեւան, Շարուրի փողոց) ստուգում իրականացնելու ընթացքում արձանագրել են սանիտարահիգիենիկ նորմերի մի շարք խախտումներ՝

արտադրամասի պատերն ունեցել են վնասված հատվածներ, պատերի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից,

առաստաղներն ապահով չեն եղել, ինչը չի կանխարգելել կեղտի կուտակումը, առաստաղից մասնիկների թափվելու հնարավորությունը,

բացվող ներքին պատուհանները չեն ունեցել միջատապաշտպան ցանցեր,

դռները հարթ չեն եղել, պատրաստված չեն եղել չներծծող նյութերից, ունեցել են վնասված եւ կոռոզիայի ենթարկված հատվածներ,

արտադրությունում օգտագործվող հումքի մշակման սեղանի կողային հատվածները, հացի պահման դարակաշարերը, հացի եփման դարակաշարերը, որոնք անմիջապես շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, կառուցված չեն եղել հիգիենայի պահանջները բավարարող նյութերից եւ չեն պահվել նորոգ ու բարվոք վիճակում:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ «Էվրիկա Գրուպ» ՍՊ ընկերությանը պատկանող հացի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է:

Հայտնաբերված խախտումները վերացնելու համար սահմանվել է վերջնաժամկետ:

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Արմավիրի մարզի Ծիածան գյուղի բնակիչ 56-ամյա տղամարդը թմրանյութ է պահում եւ օգտագործում:

Տեղեկությունը ստուգելու նպատակով Ծիածան մեկնած Համայնքային ոստիկանության Վաղարշապատի եւ Աշտարակի բաժինների ծառայողները 56-ամյա տղամարդու հյուրասենյակի սեղանին նկատել են թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթներ: Ծիածան գյուղի բնակիչը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժին: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 56-ամյա տղամարդու տանը հայտնաբերվել է 169 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԷՐ ՊԱՀՈՒՄ

Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, հունվարի 16-ին Օհանավան գյուղում հայտնաբերել, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել նույն գյուղի 50-ամյա մի բնակչի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են 3 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց եւ մոխրացած հետքերով կաթուցիչ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 50-ամյա տղամարդու տան հետնամասի պատի մեջ հայտնաբերվել է 18,4 գրամ թմրամիջոց: Օհանավանի 50-ամյա բնակիչը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր: Նախաքննությունը շարունակվում է:

ՈՉՆՉԱՑՐԵԼ ԵՆ 327 ԾԱՌ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ շինարարական աշխատանքներ իրականացնող ընկերությունը 2024 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Գյուլագարակի անտառպետության տարբեր պահաբաժիններում, շինարարական տեխնիկայի կիրառմամբ, կոտրելու եւ արմատախիլ անելու եղանակով ոչնչացրել է պետական սեփականություն հանդիսացող տարբեր տրամագծերի 208 ծառ:

Նախաքննության ընթացքում կատարված վարութային եւ ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է նաեւ, որ Լոռու մարզի Գյուլագարակ բնակավայրի վարչական տարածքում նույն եղանակով ոչնչացվել է համայնքային սեփականություն հանդիսացող տարբեր տրամագծերի 119 ծառ:

Վերոնշյալ գործողությունների հետեւանքով պետությանը պատճառվել է խոշոր չափերի՝ 4 մլն 479 հզր ՀՀ դրամի գույքային վնաս:

Մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 387-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (ծառերը, թփերը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ապօրինի ձեռք բերված կոճղերը, ծառերը կամ թփերը տեղափոխելը):

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում պետությանն ու Գյուլագարակ համայնքին պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 20-ից 21-ը բացահայտվել է 129 հանցագործություն, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐՈԳԵԼ ԵՆ, ՃԱՆԱՊԱՐՀԸ՝ ՈՉ

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2025 թվականից սկսվել, իրականացվել է Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի տարածքում, Ադրբեջանի հետ սահմանագոտում գտնվող Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցու նորոգումը: 6-7-րդ դարերում կառուցված եկեղեցին խորհրդային տարիներին՝ 1975-1977թթ. նորոգվել է: Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհից երեւում է, որ եկեղեցու ծածկը վերանորոգել են, նորոգման աշխատանքների ժամանակ հանված խաչը վերստին հառնում է եկեղեցու գլխին: Ոսկեպարի բնակիչները հրատապ են համարում նաեւ Սուրբ Աստվածածին եկեղեցի տանող նորմալ, քիչ թե շատ բարեկարգ ճանապարհի կառուցումը: Անբարեկարգ ճանապարհի պատճառով եկեղեցի այցելուների թիվը քիչ է: 2024թ. սահմանազատման անվան տակ սահմանի այդ հատվածում գտնվող, ավելի քան 30 տարի ամրացված դիրքերը միակողմանի կերպով Ադրբեջանին հանձնելու հետեւանքով նոր սահմանագիծը ավելի մոտեցել է Ոսկեպարի հնամենի եկեղեցուն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ

2025թ. դեկտեմբերի 25-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե տարեվերջի դրությամբ պետական բյուջեից որքան պարգեւավճար են ստացել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի աշխատողները եւ որքան գումար են ստացել դրամական օգնություն ստանալու համար Տավուշի մարզպետին դիմած մարզի սոցիալապես անապահով բնակիչները: Մարզպետարանից պատասխանել են. «2025թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 65 միլիոն 893 հազար 600 դրամ պարգեւավճար: Հայաստանի Հանրապետության 2025թվականի պետական բյուջեով՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսվել է 67 միլիոն 547 հազար դրամ ֆինանսական միջոցներ: Մարզպետի աշխատակազմում դրամական օգնության համար ստացվել է 1571 դիմում: Պետական բյուջեով նախատեսված դրամական միջոցներն ամբողջությամբ ծախսվել են: Գումարների վճարումը կատարվել է կանխիկ՝ բանկային համակարգի միջոցով»: Տավուշի մարզպետի աշխատակազմը աշխատանքային ի՞նչ նվաճումների համար է աղքատ, մեծ վարկերի տակ կքած Հայաստանի պետական բյուջեից այդքան առատորեն պարգեւատրվել: Մարզպետի աշխատակազմն անմիջական կերպով ընդամենը 2 ոլորտ է կառավարում՝ մարզի առողջապահական հիմնարկները (բացի մարզի քաղաքներում գործող բժշկական կենտրոնները) եւ մարզի պետական հանրակրթական դպրոցները (բացի ավագ դպրոցները եւ վարժարանները): Այդ 2 ոլորտներն էլ մարզպետարանը ղեկավարում է համապատասխան նախարարությունների՝ առողջապահության եւ ԿԳՄՍ նախարարությունների հետ համատեղ, 2 ոլորտում էլ չլուծված բազում հիմնախնդիրներ կան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՈՅԱՏԵՎՈՒՄ

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ 36.000 ԴՐԱՄ

Մինչ պետական բարձրաստիճան պաշտոնյաների ծառայողական ծախսերը հաճախ ավելանում են՝ հասնելով միլիոնավոր դրամների, Հայաստանում շուրջ 500 հազար թոշակառու փորձում է ապրել 36–49 հազար դրամ թոշակով՝ այն դեպքում, երբ սպառողական նվազագույն զամբյուղը կազմում է 82 հազար դրամ:

ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ Հայաստանում կա մոտ 500 հազար թոշակառու, որոնցից 385 հազարը տարիքային են, իսկ մնացածը՝ առողջության սահմանափակ կարողություններ ունեցող քաղաքացիներ:

Այսօր Հայաստանում նվազագույն կենսաթոշակը կազմում է 36.000 դրամ, իսկ միջին կենսաթոշակը՝ 49.000 դրամ: Սակայն պաշտոնական հաշվարկներով՝ սպառողական զամբյուղի արժեքը 82.000 դրամ է, ինչը նշանակում է, որ թոշակառուի եկամուտը չի բավարարում նույնիսկ նվազագույն սննդի եւ կենցաղային կարիքները: Փորձագիտական հաշվարկներով՝ նվազագույն սննդի ու կենցաղային ծախսերը 1.5 անգամ ավելի են, քան միջին կենսաթոշակը, իսկ նվազագույն կենսաթոշակից գրեթե երկու անգամ բարձր են: Այլ կերպ ասած՝ թոշակառուն իր ամբողջ թոշակով չի կարող ապահովել անգամ ամսվա առաջին կեսի նվազագույն կարիքները:

Միեւնույն ժամանակ, պետական բյուջեից ֆինանսավորվող համակարգում մեկ պաշտոնյայի ծառայողական մեքենայի, վառելիքի ամսական ծախսը, մեկ գործուղումը կամ պարգեւավճարը հաճախ գերազանցում են թոշակառուի ամբողջ ամսական, երբեմն էլ՝ տարեկան եկամուտը: Այն, ինչ պետական պաշտոնյայի համար համարվում է առօրյա ծախս, թոշակառուի համար մեկ ամսվա գոյատեւման սահմանն է:

Հիշեցնենք, որ Հայաստանում աղքատությունը հասնում է 21.7 տոկոսի, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 0.6 տոկոսի: Այսպիսով, պաշտոնական թվերը փաստում են՝ Հայաստանում կենսաթոշակը ոչ թե ապահովում է արժանապատիվ ծերություն, այլ պարզապես թույլ է տալիս գոյատեւել՝ պետական շռայլության ֆոնին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԱՏՕ-Ի ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինլանդիայի, Նորվեգիայի եւ Շվեդիայի հյուսիսային տարածաշրջաններում կանցկացվեն լայնածավալ Cold Response (Սառը արձագանք) զորավարժությունները՝ արկտիկական պայմաններում արտաքին սպառնալիքներին հակազդելու համար: Այս մասին հաղորդել է ֆինական Yle հեռուստառադիոհեռարձակող ընկերությունը:

«Ֆինլանդիայի համար կարեւոր է, որ ՆԱՏՕ-ի պլաններին համապատասխան համատեղ զորավարժությունները տարածվեն անմիջապես Ֆինլանդիայի տարածքում: Սա կուժեղացնի զսպման եւ պաշտպանական կարողությունները», - Yle-ին ասել է բրիգադի գեներալ Մանու Տուոմինենը:

Նրա խոսքով՝ զորավարժությունները պետք է նպաստեն բազմազգ համագործակցության զարգացմանը եւ անվտանգության ոլորտի փոփոխություններին արագ արձագանքելու պատրաստակամությանը:

«Նպատակն է ստուգել լոգիստիկայի, զորքերի տեղափոխման եւ կենտրոնացման ֆունկցիոնալությունը», - ասել է Տուոմինենը:

Cold Response-ը կդառնա 2026 թվականի ամենակարեւոր զորավարժությունն՝ ուղղված ՆԱՏՕ-ի երկրների վերապատրաստմանը բարդ արկտիկական պայմաններում գործողություններին:

Նորվեգիայի ղեկավարությամբ մարտի 9-ից մինչեւ 20-ն անցկացվող զորավարժություններին կմասնակցի շուրջ 25 000 զինվոր՝ 14 տարբեր երկրներից:

Ֆինլանդիայում զորավարժություններին կմասնակցի 7500 զինվոր: Դրանց կեսից ավելին՝ 4000-ը, ցամաքային եւ օդային ճանապարհներով կժամանեն ՆԱՏՕ-ի այլ երկրներից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից եւ Իտալիայից:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՐԱՎԵՐԸ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն ընդունել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հրավերը՝ միանալու Խաղաղության խորհրդին, որի աշխատանքը կուղղվի Գազայի հատվածում հակամարտության եւ հնարավոր այլ համաշխարհային հակամարտությունների կարգավորմանը: Այս մասին հաղորդում է The Times of Israel-ը՝ հղում անելով վարչապետի գրասենյակին:

Խաղաղության խորհուրդը Թրամփի նախաձեռնությունն է, որն ուղղված է ամբողջ աշխարհում հակամարտությունների կարգավորմանը՝ սկսած Գազայի հատվածից: Ենթադրվում է, որ Թրամփն ինքը ցմահ կգլխավորի այն:

Ավելի վաղ խորհրդին միանալու ԱՄՆ նախագահի հրավերին համաձայնություն են տվել Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Արգենտինան, Հունգարիան, Վիետնամը, Մարոկկոն, ԱՄԷ-ն:

Մինչդեռ եվրոպական երկրների դիվանագետներն ավելի վաղ մտահոգություն էին հայտնել, որ Թրամփը փորձում է փոխարինել ՄԱԿ-ը՝ այլընտրանքային հարթակ ստեղծելով գլոբալ հակամարտությունների կարգավորման համար:

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ԻՐԱՆԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն Իրանին սպառնացել է պատժել, եթե այնտեղից փորձեն սպանել իրեն: NewsNation-ին տված հարցազրույցում Թրամփը հայտարարել է, որ այս դեպքում ինքը «շատ հստակ հրահանգներ է տվել... ջնջել նրանց Երկրի երեսից»:

«Նրանք չպետք է նման բան անեն, բայց ես գրություն եմ թողել, որ եթե երբեւիցե ինչ-որ բան պատահի, նրանց ամբողջ երկիրը կպայթեցվի.... Ես շատ հստակ հրահանգներ ունեմ՝ եթե ինչ-որ բան պատահի, նրանց կջնջեն Երկրի երեսից», - ասել է ամերիկացի առաջնորդը:

Ավելի վաղ Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի ներկայացուցիչ գեներալ Աբոլֆազլ Շեքարչին հայտարարել էր, որ Թեհրանում մեծ նշանակություն չեն տալիս Թրամփի սպառնալիքներին, իսկ Իրանի ղեկավարության դեմ ԱՄՆ-ի ցանկացած ռազմական գործողություն անպատասխան չի մնա:

Press TV-ի փոխանցմամբ՝ Շեքարչին նախազգուշացրել է «ջախջախիչ պատասխան միջոցների» մասին՝ ԱՄՆ-ի կողմից Իրանի ղեկավարության նկատմամբ ցանկացած ռազմական գործողության դեպքում:

Հունվարի 18-ին Թրամփը POLITICO-ին տված հարցազրույցում հայտարարել էր, որ «եկել է Իրանում նոր ղեկավարություն փնտրելու ժամանակը»:

Ավելի վաղ Թրամփը զգուշացրել էր Իրանի դեմ կոշտ միջոցների մասին՝ երկրում լայնածավալ անկարգությունների ճնշմանն ի պատասխան: Սակայն անցյալ շաբաթ ԱՄՆ նախագահը հայտարարեց, որ իր տեղեկատվությամբ՝ Իրանի իշխանություններն այլեւս պլաններ չունեն մահապատիժ իրականացնել բողոքի ցույցերին մասնակցած մարդկանց նկատմամբ:

Իրանում դեկտեմբերի 28-ից բողոքի ակցիաներ էին սկսվել իրանական ռիալի փոխարժեքի կտրուկ նվազման եւ բարձր գնաճի դեմ: Հունվարի 8-ից, ըստ Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի հայտարարության, ցուցարարների շարքում հայտնվել են զինված ահաբեկիչներ: Երկու շաբաթից ավելի տեւած հակակառավարական ցույցերի ընթացքում մի քանի հազար մարդ է զոհվել, այդ թվում՝ իրավապահներ:

● *Հունվարի 20-ին մայրաքաղաքում գրանցվել է 8 ավտովթար. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

FINTECH360–Ի ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Երեւանում այս տարվա ապրիլին կայանալիք FINTECH360 միջազգային համաժողովին մինչեւ մարտի 31-ը գրանցվելու դեպքում կտրամադրվի 15% զեղչ մասնակցության բոլոր փաթեթների համար:

Համաժողովը կանցկացվի ապրիլի 27-29-ը՝ Seven Visions Resort & Places, The Dvin համալիրում: Այս տարի համաժողովը կհամախմբի ավելի քան 500 մասնակից 30 երկրներից: Յունիբանկը FINTECH360 համաժողովի գլխավոր հովանավորն է:

Պանելային քննարկումների հիմնական թեմաներն են՝

- Ֆինանսական ծառայությունների թվային վերափոխում
- Արհեստական բանականության կիրառումը բանկային ոլորտում
- Կենսաչափական եւ թվային նույնականացում
- Էլեկտրոնային առեւտուր
- Տվյալների պաշտպանություն
- Իրական ակտիվների տոկենիզացիա
- Կրիպտոարժույթներ եւ բլոկչեյն տեխնոլոգիա

3-օրյա ծրագրը ներառում է նաեւ էքսկուրսիաներ, այցելություն գինեգործարան եւ գալա-ընթրիք:

Համաժողովի ամբողջական ծրագիրը եւ գրանցումը հասանելի են https://fintech360.io/ կայքում:

ՋՈՐՔԵՐ Է ՈՒՂԱՐԿԵԼ

Atlantic Airways ավիաընկերության ինքնաթիռը, որը տեղափոխում էր դանիացի լրացուցիչ զինվորականների, վայրէջք է կատարել Գրենլանդիայի մայրաքաղաք Նուուկում: Զինվորականների մի մասը շարունակել է թռիչքը դեպի Նուուկից հյուսիս գտնվող Կանգերլուս բնակավայր: Այդ մասին տեղեկանում ենք Deutsche Wellen-ից:

Զինվորները մասնակցելու են Դանիայի կողմից համակարգվող «Արկտիկական դիմացկունություն» կոչված զորավարժություններին, նշել է Դանիայի Արկտիկական հրամանատարության ղեկավար Սյորեն Անդերսենը: Այն հարցին, թե քանի դանիացի զինվոր է ներկայումս տեղակայված Գրենլանդիայում, Անդերսենը հրաժարվել է պատասխանել: Այդուհանդերձ լրատվամիջոցները նշում են, որ Նուուկում ներկայումս կա առնվազն 100 դանիացի զինվոր, իսկ Կանգերլուսում՝ եւս 100 զինվոր:

Դանիայի խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի ղեկավար Ռասմուս Յարլովն ասել է, որ իր երկիրը պատրաստ է ռազմական պատասխան տալ Միացյալ Նահանգներին, եթե վերջինս փորձի ուժով գրավել արկտիկական կղզին: «Մենք անպայման կպաշտպանենք Գրենլանդիան: Եթե ամերիկյան զորքերը ներխուժեն, պատերազմ կսկսվի, եւ մենք կկռվենք միմյանց դեմ», - ասել է Յարլովը:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

2% ՀԵՏՎՃԱՐ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ

2026 թվականի հունվարի 1-ից Հայէկոնոմբանկի Arca վճարային քարտերով կատարված անկանխիկ գործարքների դիմաց կստանաք 2% հետվճար (քեշբեք):



Հետվճարը տրամադրվում է 1,000 դրամը գերազանցող գործարքների դիմաց ինքնաշխատ եղանակով մինչեւ հաջորդ ամսվա 25-ը:

Յուրաքանչյուր մեկ գործարքի համար հետվճարը չի կարող գերազանցել 6,000 դրամը, յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար՝ 60,000 դրամը: Ծրագրի շրջանակում շահառուները հետվճարի մասով հարկային պարտավորություններ չունեն:

Մեկից ավելի Arca վճարային քարտեր ունենալու դեպքում հետվճարի առավելագույն չափը չի փոխվում, եւ հետվճարը փոխանցվում է շահառուի այն քարտին, որով իրականացվել է վերջին գործարքը:

Հետվճար չեք կարող ստանալ, եթե վճարումը կատարել եք.

- կապի եւ կոմունալ ծառայությունների համար,
- ՀՀ պետական եւ համայնքների բյուջեների օգտին,
- բարձր ռիսկային գործարքների (խաղատներ, կրիպտո ակտիվներ եւ այլն) համար,
- ֆինանսաբանկային ծառայությունների դիմաց,
- Arca նվեր եւ մեկանգամյա օգտագործման համար նախատեսված քարտերով:

Հետվճարը չի գործի նաեւ, եթե գործարքը վերաբերում է ստացված հետվերադարձին, փոխհատուցմանը եւ հետգանձումներին: Էլեկտրոնային դրամապանակներով իրականացված գործարքները եւս ներառված չեն հետվճարի ծրագրում:

Ծրագիրն իրականացվում է «Արմենիան Քարդ» ՓԲԸ (Arca) եւ ՀՀ կառավարության համագործակցության արդյունքում: Որպես առաջին նմանօրինակ մասշտաբային ծրագիր՝ այն նպատակ ունի խթանել անկանխիկ գործարքների առաջխաղացումն ու թվային տեխնոլոգիաների զարգացումը: Պիլոտային ծրագրի իրականացման ժամկետը՝ 01.01.2026-31.12.2026թ.:

Հունվարի 15-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Arca-ի գործադիր տնօրեն Վարդան Խաչատրյանը, ԿԲ նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը եւ Ֆինանսների նախարարի տեղակալ Էդգար Մկրտչյանը ներկայացրին ծրագրի մանրամասները:

ԿԲ նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանն անդրադարձավ ՀՀ առեւտրային բանկերի կարեւոր դերակատարությանն այս նախաձեռնության իրականացման գործում. «Սա շատ կարեւոր նախաձեռնություն է՝ ուղղված անկանխիկ գործարքների առաջխաղացմանը եւ տնտեսական աշխուժության խթանմանը: Կարեւոր է ընդգծել, որ Arca-ն կարողանում է իրականացնել հետվճարի այս ծրագիրը առեւտրային բանկերի կողմից վճարվող սակագներից ձեւավորվող ֆոնդի հաշվին: Հայաստանի բոլոր առեւտրային բանկերն արագ արձագանքել են այս ծրագրին՝ ձգտելով առավել հարմար պայմաններով սպասարկում ապահովել հաճախորդներին»:

Հիշեցնենք, որ 2026թ. հունվարի 1-ից Arca սոցիալական քարտով (Arca Pension) անկանխիկ վճարումների դիմաց կստանաք 20% հետվճար (առավելագույնը 10,000 դրամ), որին կգումարվի նաեւ 2% հետվճարի ծրագիրը:

Հայէկոնոմբանկի Arca քարտեր կարող եք պատվիրել՝ այցելելով Բանկ կամ AEB Mobile բջջային հավելվածի միջոցով՝ անվճար առաքմամբ Երեւանում եւ 1,000 դրամ առաքման վճարով՝ ՀՀ մարզերում:

Հայէկոնոմբանկի Arca քարտերով (բացառությամբ՝ Arca սոցիալականի) կարող եք ստանալ նաեւ վարկային գիծ առավել հարմար պայմաններով:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԿԱԼԱՆԵԼ ԵՆ SAGITTA ԼՅԱՆԱՎԸ

ԱՄՆ զինվորականները հունվարի 20-ին Կարիբյան ավազանում վերահսկողության տակ են վերցրել Sagitta լցանավը: Այս մասին հաղորդում է ամերիկյան Հարավային հրամանատարությունը:

«ԱՄՆ զինվորականները, ԱՄՆ ներքին անվտանգության նախարարության հետ համակարգված, վերահսկողության տակ են վերցրել Sagitta նավն՝ առանց որեւէ միջադեպի», - ասվում է X հարթակում հրամանատարության հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ սա հերթական կալանված նավն է, որն անտեսում էր ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի սահմանած կարանտինը:

Ըստ հաղորդագրության՝ զինվորականները կշարունակեն այնպես անել, որ Վենեսուելայից նավթի արտահանումը լինի համակարգված եւ օրինական կերպով:

CBS News-ը նշում է, որ սա Վենեսուելայի հետ կապված յոթերորդ լցանավն է, որի նկատմամբ ԱՄՆ-ն վերահսկողություն է հաստատել:

Sagitta-ն, որը նավարկում է Լիբերիայի դրոշի տակ, պատկանում է Հոնկոնգում գրանցված ընկերության:

ՇՈԿՈԼԱԴԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հունվարի 20-ին այցելել է «Վելլար գրուպ» ընկերության նոր կառուցվող շոկոլադի եւ հրուշակեղենի գործարան: Այս մասին հայտնել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Այցին մասնակցել է նաեւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Էդգար Ջաքարյանը:

Ընկերության ղեկավարության ուղեկցությամբ նախարարը շրջել է գործարանի տարածքով, ծանոթացել ներդրված սարքավորումներին, արտադրական հզորություններին եւ տեխնոլոգիական հոսքագծերին:

Ներկայում ծրագրի շրջանակում արդեն իսկ իրականացվել է շուրջ 120 միլիոն եվրոյի ներդրում, առաջիկայում նախատեսվում է ներդնել եւս 25 միլիոն եվրո:

Գործարանի տարածքը կազմում է շուրջ 25 հա: Այն հագեցած է հիմնականում գերմանական եւ դանիական առաջատար ընկերություններից ներմուծված ժամանակակից սարքավորումներով: Երեք տարվա ընթացքում նախատեսվում է գործարանի ամբողջական գործարկումը, որի արդյունքում արտադրական ծավալները կհասնեն օրական մինչեւ 200 տոննայի, իսկ աշխատատեղերի թիվը կհասնի մինչեւ 2000-ի:

Նախատեսվում է արտադրել հրուշակեղենի լայն տեսականի՝ շոկոլադե եւ կարամելային կոնֆետներ, սպիտակուցային եւ մրգային բատոններ, շոկոլադապատ թխվածքաբլիթներ եւ վաֆլիներ, ինչպես նաեւ հայկական չրեր՝ պատված բարձրորակ շոկոլադով:

«Վելլար գրուպ»-ն օգտվել է պետական օժանդակության գործիքակազմից՝ մաքսատուրքից ազատման արտոնությունից եւ ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց ծրագրից:

«Վելլար գրուպ»-ը շվեդական ծագմամբ GNG միջազգային բիզնես խմբի ընկերություններից է:

ՀՀ էկոնոմիկայի նախարարը «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է, որ այն լինելու է տարածաշրջանում շոկոլադի ամենամեծ գործարանը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՅՆ ՊԱՀԸ, ԵՐԲ ԾՆՎԵՑ ՀԱՆՃԱՐԸ

«ՄԻՔԵԼԱՆՋԵԼՈՅԻ ՎԱՂ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՅԸ»

Որոշ հանճարներ չեն ձեւավորվում տարիների ընթացքում, նրանք պարզապես վաղ են բացվում: Միքելանջելոյի աշխատանքները դրա ամենախոսուն վկայություններից մեկն են:

Մինչեւ Վերածննդի մեծագույն նկարիչներից մեկը դառնալը, Միքելանջելո Բուոնարոտին (1475-1564) սովորական 12-ամյա տղա էր, չնայած նրա մանկությունը, անկասկած, տարբերվում էր այն ամենից, ինչ մենք այսօր պատկերացնում ենք, գրում է The Colossal-ը:

Նույնիսկ այս տարիքում նա ամբողջությամբ խորասուզված էր նկարչության եւ գեղանկարչության մեջ՝ ուսումնասիրելով այլ վարպետների աշխատանքները, մասնավորապես՝ 15-րդ դարի գերմանացի նկարիչ Մարտին Շոնգաուերի «Սուրբ Անտոնիոսը դեւերի կողմից տանջվում է» փորագրությունը:

Սակայն, ի տարբերություն դեռահասների մեծամասնության, Միքելանջելոն որոշեց պարզապես չպատճենել պատկերը. նա տեսարանը տեղափոխեց փայտե վահանակի վրա՝ օգտագործելով տեմպերա, եւ դա արեց այնպիսի հմտությամբ, որ երիտասարդ նկարչի ոճն անմիջապես բացահայտեց նրա տաղանդը:

Միքելանջելոյի ամենավաղ հայտնի նկարը՝ «Սուրբ Անտոնիոսի նահատակությունը», ստեղծվել է մոտավորապես 1487-1488 թվականներին, երբ նա 12 կամ 13 տարեկան էր:

Աշխատանքի վարպետին վերագրվելը երկար ժամանակ անհայտ մնաց. միայն 2008 թվականին նկարը աճուրդում վաճառվելուց հետո մասնագետները կարողացան հեռացնել դեղնած լաքը եւ հետագա անհաջող շտկումները: Վերականգնումը ստացավ եզակի գունապնակ եւ անսովոր խորություն, որը բացահայտեց ապագա հանճարի ձեռքը:

Վերականգնումից հետո էր, որ շատ արվեստի պատմաբաններ, այդ թվում՝ Մետրոպոլիտեն թանգարանի երկարամյա վարիչ Էվերեթ Ֆեյհին, վստահորեն հայտարարեցին, որ նկարը Միքելանջելոյինն է: Նախկինում այն համարվում էր Դոմենիկո Ղիրլանդայոյի մեծ ֆլորենտական արհեստանոցի աշխատանք, որին երիտասարդ նկարիչը 1488 թվականին միացել էր որպես աշակերտ:

Վերականգնումից հետո բացահայտված եզակի կոմպոզիցիան եւ արվեստի պատմաբան եւ վերականգնող Ջորջիո Բոնսատիի փորձագիտական կարծիքը համոզեցին մասնագետներին, որ այն իսկապես Միքելանջելոյի աշխատանքն է: Այսօր նկարը գտնվում է Ֆորտ Ուորթի Քիմբել թանգարանի հավաքածուում եւ վարպետի միակ աշխատանքն է, որը հասանելի է Հյուսիսային Ամերիկայի հանրային հավաքածուում:

Նկարի թեման հիմնված է Սուրբ Անտոնիոս Մեծի կյանքի վրա, ինչպես նկարագրել է Ալեքսանդրիայի Աթանասը չորրորդ դարում: Մի դրվագում եգիպտացի մի ճգնավոր տեսիլք է տեսնում. նա բարձրանում է օդում եւ դեւերի հարձակմանն է ենթարկվում, բայց դիմանում է նրանց տանջանքներին: Քիմբելի թանգարանի տվյալներով՝ Միքելանջելոյի ժամանակակիցները, ինչպիսիք են Ասկանիո Կոնդիվին եւ Ջորջիո Վազարին, հայտնել են, որ նկարիչը, դեւային արարածներին ավելի հավաստի դարձնելու համար, ուսումնասիրել է վառ գունավոր թեփուկները եւ ձկների այլ մասերը հենց շուկայում:

Ինքը՝ Միքելանջելոն, որը հայտնի էր իր պերֆեկցիոնիզմով, հավանաբար չէր ցանկանա իր անունը կապել «սիրողական» աշխատանքի հետ, եւ սա կարող է լինել այն պատճառներից մեկը, թե ինչու նկարը երկար ժամանակ վերագրվում էր արհեստանոցին, այլ ոչ թե վարպետին: Սակայն արվեստի պատմաբանների եւ նկարչի աշխատանքների երկրպագուների համար սա եզակի հնարավորություն է նայելու նրա վաղ տարիներին եւ տեսնելու այն տաղանդի ի հայտ գալը, որը հետագայում փոխելու էր արվեստի պատմությունը:

Այս աշխատանքը թույլ է տալիս տեսնել ոչ միայն ապագա հանճարի առաջին քայլերը, այլ նաեւ այն ներքին համառությունն ու տեսողական համարձակությունը, որոնք Միքելանջելոյին տարիներ անց պիտի դարձնեին Վերածննդի ամենահզոր կերպարներից մեկը: Նկարը հիշեցնում է, որ մեծ արվեստը հաճախ սկսվում է այնտեղ, որտեղ դեռ երեխայի ձեռքն է, բայց արդեն՝ հանճարի հայացքը:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՖՈՒՏԶԱԼԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մեկնարկում է ֆուտզալի Եվրոպայի առաջնության հիմնական փուլը, որին պատմության մեջ առաջին անգամ մասնակցում է նաեւ Հայաստանի ֆուտզալի հավաքականը: Ռուբեն Նազարեթյանի սաներն ընդգրկված են Բ ենթախմբում, որտեղ կմրցեն Լիտվայի, Չեխիայի, Ուկրաինայի հավաքականների հետ: Այս անգամ ֆուտզալի Եվրոպայի առաջնությունը հյուրընկալում է երեք երկիր՝ Լատվիան, Լիտվան ու Սլովենիան: Այս առաջնությանը երեք նորեկներ են մասնակցում, այդ թվում նաեւ՝ Հայաստանը:

Եվրոպայի առաջնության առաջին խաղը Հայաստանի ազգային հավաքականը կանցկացնի հունվարի 22-ին՝ Ուկրաինայի հավաքականի դեմ: Հունվարի 25-ին Ռուբեն Նազարեթյանի թիմը կհանդիպի Չեխիայի, հունվարի 28-ին՝ Լիտվայի հավաքականների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՖԻՖԱ–Ի ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը ՖԻՖԱ-ի դասակարգման նոր աղյուսակում 105-րդ հորիզոնականում է: Նախորդ աղյուսակի համեմատ թիմն առաջադիմել է մեկ հորիզոնականով: 10 առաջատարների շարքում միմյանց հաջորդում են Իսպանիան, Արգենտինան, Ֆրանսիան, Անգլիան, Բրազիլիան, Պորտուգալիան, Նիդեռլանդները, Մարոկկոն, Բելգիան, Գերմանիան:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հայաստանի դահուկավազքի եւ սնոուբորդի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարգսյանը հրաժարական է տվել: Այս մասին Գագիկ Սարգսյանը հայտնել է «Ֆեյսբուք»-ի իր էջում ուղիղ եթերի ժամանակ: «Որոշում եմ կայացրել վայր դնել Հայաստանի դահուկավազքի ֆեդերացիայի նախագահի լիազորությունները: Սա շատ դժվար ու բարդ որոշում էր ինձ համար: Ինչն ունի սկիզբ, ունի նաեւ ավարտ: Պատճառները մի քանիսն են: Հիմնական պատճառն այն աշխատանքային մթնոլորտի բացակայությունն է, որ պետք է լինի Հայաստանի Հանրապետությունում դահուկային մարզաձեւը զարգացնելու համար, այն կամքը, որ պետք է լինի, բայց դա միակողմանի չի կարող լինել: Այսինքն, միայն ֆեդերացիայի ջանքերով կամ մենակ ֆեդերացիայի նախագահ լինելով՝ այդ մարզաձեւերը հնարավոր չէ զարգացնել»,- ասել է Սարգսյանը: Նա պնդել է, որ տարիներ շարունակ իրենց բոլոր առաջարկները, խնդրանքները, հորդորները՝ ուղղված ԿԳՄՍ նախարարությանը, այդպես էլ լուծում չեն ստացել: Նաեւ շնորհակալություն է հայտնել բոլոր այն մարդկանց, որոնք իր պաշտոնավարման ընթացքում եղել են իր կողքին:

Գագիկ Սարգսյանը Հայաստանի դահուկավազքի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար էր ընտրվել 2005 թվականին, իսկ հետագայում դարձել ֆեդերացիայի նախագահը:

ԺԱՄԱՆՑ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Պատմության թանգարանում հունվարի 20-ին վերաբացվեց «Հայաստանը 19-րդ դարում» խորագրով մշտական ցուցադրությունը:

Ինչպես ներկայացրեց Հայաստանի պատմության թանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Պողոսյանը, այս մշտական ցուցադրության հատվածը նախագծվել եւ իրականացվել է նախորդ տարվա ընթացքում:

«Ներկայացված են մոտ 200 տարբեր տիպի նմուշներ. կան գորգեր, կարպետներ, ազգային տարազներ, արդուզարդի պարագաներ, զենքեր: Ունենք պատմական վավերագրեր, հետաքրքիր տեխնոլոգիական լուծումներ, որոնք շարունակվել են այլ հատվածների կոնտեքստում, բայց փորձել ենք նաեւ որոշակի նորարարական ձեւերով ներկայացնել»,-ասաց Պողոսյանը՝ հավելելով, որ ներկայացված են նաեւ ինտերակտիվ քարտեզներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տեսնել պատմական իրադարձությունների ընթացքում սահմանների փոփոխությունները:

Հայաստանի տարբեր պատմազգագրական շրջաններն ընդգրկող ցուցանմուշների շարքում ներկայացված են ազգային տարազներ, նրբաճաշակ զարդեր, ձեռագործ գորգեր, բազմատեսակ աշխատանքային գործիքներ, ավանդական կենցաղային իրեր, վավերագրեր, դրամներ, մեդալներ եւ այլն:

Դրանց թվում են Էրզրումի բերդի բանալին, մեծանուն զորավար Անդրանիկ Օզանյանի թուրը, ինչպես նաեւ 1896 թվականի արտադրության կոնյակը՝ շշալցված Երեւանում հայտնի գործարար Ներսես Թաիրովի գործարանում:

ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆ

Աբու Դաբիում բացվել է բնական պատմության թանգարան: Այն ընդարձակ Սաադիյաթ մշակութային թաղամասի մի մասն է, որտեղ վերջերս բացվել են այլ խոշոր վայրեր՝ teamLab Phenomena-ն, Ջայեդի ազգային թանգարանը եւ շուտով Աբու Դաբիի Գուգենհայմ թանգարանը:

Mecanoo ճարտարապետական ընկերության կողմից նախագծված շենքը իսկական բնության հրաշքի տեսք ունի. իր անկյունային ուրվագիծը, կախված բույսերը եւ ժայռային կառուցվածք հիշեցնող ձեւը: Նույնիսկ ներքին հարդարանքը նույնքան տպավորիչ է, որքան արտաքին հարդարանքը. վեց մշտական պատկերասրահներ պատմում են Երկրի 13.8 միլիարդ տարվա պատմությունը՝ լայնածավալ ցուցահանդեսների եւ տպավորիչ ինստալյացիաների միջոցով:

Թանգարանի գլխավոր տեսարժան վայրը հայտնի Տիրանոզավր Ռեքսի կմախքն է՝ Սթան անունով: Այն ցուցադրվում է մեկ այլ Տիրանոզավր Ռեքսի կմախքի կողքին՝ աշխարհում առաջին անգամ, երբ երկու Տիրանոզավր Ռեքսի բրածոներ միասին են ցուցադրվում: Դինոզավրերից բացի, թանգարանը շեշտը դնում է տեղական պատմության վրա, ներառյալ տարածաշրջանում հայտնաբերված գտածոները, ինչպիսին է անհետացած փղի տեսակը՝ Stegotetrabelodon Emiratus-ը:

Երիտասարդ այցելուների եւ սկսնակ գիտնականների համար թանգարանը պատրաստել է ինտերակտիվ թատրոն, որտեղ ներկայացված են կրթական ֆիլմեր եւ գիտական ցուցադրություններ: Ժամանակավոր ցուցահանդեսներ արդեն նախատեսված են գալիք տարվա համար. առաջիններից են «Տրիցերատոպսի երթը» եւ «Տարվա 61-րդ վայրի բնության լուսանկարիչը», որոնք կլինեն բացման հանդիսավոր արարողության մի մասը:

Աբու Դաբիի բնական պատմության թանգարանը խոստանում է լինել մեծ տեսարժան վայր զբոսաշրջիկների եւ տեղացիների համար, որտեղ պատմությունը հանդիպում է ժամանակակից դիզայնին, իսկ գիտությունը դառնում է իսկական արկած:

● *Հունվարի 22-ին Երեւանի Պետական Կամերային թատրոնում տեղի կունենա «Տղաները չափն անցնում են» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000դր.:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Կարինե Թորոսյան, 46 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Ի պատասխան քաղաքացու հարցի՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե որոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը:

Գայանե Ստեփանյան, 35 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ ծննդի պետական գրանցման հիմքերն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին սահմանված ձեւի բժշկական փաստաթուղթը,

2) օտարերկրյա պետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին բժշկական փաստաթուղթը,

3) երեխայի ծննդյան փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը,

4) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը,

5) օտարերկրյա պետությունում ծնված անձի՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայականը եւ ծնունդը հիմնավորող այլ փաստաթղթեր:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծննդի պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում

Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում «Կանգառ-գրադարան» է, որտեղ քաղաքացիները սպասելուն զուգահեռ կարող են օգտվել գրքերից. սպասումը կարող է դառնալ հաճելի ընթերցում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 20 - 25 - 5 - 9
	Կոտայքի լեռներ	-18 - 23 - 5 - 8
	Կոտայքի նախալեռներ	- 10 - 14 0 - 3
	Գեղարքունիք	- 16 - 21 - 3 - 7
	Լոռի	-15 - 20 - 2 +1
	Տավուշ	-12 - 16 - 2 + 1
	Արագածոտնի լեռներ	- 20 - 24 - 5 - 8
	Արագածոտնի նախալեռներ	- 12 - 16 - 2 - 1

	Արարատ	- 9 - 12 - 1 -4
	Արմավիր	- 11 - 15 0 - 3
	Վայոց ձորի լեռներ	-15 - 19 - 5 - 8
	Վայոց ձորի նախալեռներ	- 9 - 12 - 1 - 4
	Սյունիքի լեռներ	-17 - 20 - 4 - 7
	Սյունիքի նախալեռներ	- 14 - 18 - 2 + 1
	Սյունիքի հովիտներ	- 6 - 10 + 2 + 5
	Երեւան	- 11 - 9 - 6 - 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.01.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*